

ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ ՍԱՍԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.  
ԱՆՅՈՒՇ ԲԵՐԴՈ

ՋՈՒՍՏՈ ՏՐԱԻՆԱ (Իտալիա)

Սասանյան կայսրությունում բարձրաստիճան անձանց բանտարկություն փաստը բերգ-բանտում համեմատաբար լավ է վկայագրված<sup>1</sup>: Սյո վայրերից մեկը Տիդրոնի մոտակայքում գտնվող Գրուանդական ամրոցն է (այդպես է անվանվել հայկական ավանդույթում), որտեղ Որմիզդ IV թագավորը VI դ. վերջերին բանտարկել է իր քաղաքական հակառակորդներին<sup>2</sup>: Հավանաբար, խոսքը վերաբերում է «քաղաքի հանգիստակաց բլրի վրա» (Zos. 2.27.2) գտնվող միևնույն վայրին, որտեղ անցյալում բանտարկված է եղել իշխան Որմիզդը, որին, հոր մահից հետո (309 թ. սեպտեմբերի 5-ին), ձերբակալել է իր ավագ եղբայրը (մանրամասները տե՛ս Zon. 13.5.18): Ըստ Ջոսիմոսի իշխանի փախուստը կարող էր կազմակերպված լինել նրա կինը՝ ձկան մեջ նրան խարտոց ուղարկելով<sup>3</sup>: Ձի կարելի բացառել, որ խոսքը վերաբերում է միևնույն ամրոցին, որտեղ Մանի մարգարեն կարող է անցկացրած լինել իր վերջին օրերը:

Սակայն Սասանյան կայսրության ամենանշանավոր բանալ Անհուշ բերդն էր, որը, ինչպես հավաստում են հունահռոմեական և հայկական բաղմամբիվ սկզբնաղբյուրներ, գտնվում է Խուսթիստանում (Շոշքում): Բերդի մասին առաջին հստակ հիշատակությունը հանդիպում ենք մոտավորապես 368 թ., երբ Հարավային Կովկասում Սասանյանները էքսպանսիայի հետևանքով Հայաստանի Արշակ թագավորը դաճընկեց է արվել: Համաձայն Ամիրանոսի (27.12.3.)՝ արքայից արքա Շապուհը նրան հրավիրել է

1 A. C h r i s t e n s e n. L'Iran sous les Sassanides. Copenhagen-Paris, 1944, p. 307.

2 Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությունը Գ. Վ. Արքայանի, Երևան, 1979, գլուխ Ժ, էջ 72-76, P. P e e t e r s. Sainte Golindouch. Martyre Perse († 13 juillet 591).- "Analecta Bollandiana" 62 (այսուհետև՝ ABoll): Այս հատվածի հենքի մասին տե՛ս J. H o w a r d - J o h n s t o n. The Two Great Powers in Late Antiquity: A Comparison.- A. C a m e r o n (ed.), The Byzantine and Early Islamic Near East. III. State. Resources and Armies, Princeton, 1995:

3 Նրա փախուստից հետո (καί διὰ τούτου μετ' ἀσφαλείας διασωθείς) Որմիզդն ապաստան է որոնել Կոստանդինի մոտ, որը նրան ընդունել է բոլոր պատիվներով: Որմիզդը որոշ ժամանակ հարկադրված է եղել մնալու Հռոմում: Այդուհանդերձ, նրա ժամանումը Հռոմ դժվար է թվադրել: Ջոսիմոսը հուշում է 324 թ., այն դեպքում, երբ համաձայն Հովհաննես Անտիոքցու (հատված 178.1)՝ Որմիզդը դնացել է ապաստանելու ոչ թե Կոստանդինի, այլ Լիցիյի մոտ (παρὰ Λικιννίου φιλοτίμως ὑπεδεχθη): Այսպիսով, դուրսը Սասանյան հետևանքով, երկու սարքեր ավանդություններին ի տես, Ջոնարտը մատնանշում է καὶ πρὸς Ῥωμαίους ἀπεδρα καὶ ὑπεδεχθη φιλοτιμοῦατα. Համաձայն Պասուի (F. P a s c h o u d (ed.), Zosime. Histoire nouvelle. T. I (livres I-II). Paris, 1971, p. 218)՝ տվյալները կարող են անհամատեղելի լինել: Բլոքլեյը (R.C. B l o c k l e y. East Roman Foreign Policy. Formation and Conduct from Diocletian to Anastasius. Leeds, 1992, 10 e 173, n. 16) գտնում է, որ Որմիզդը Հռոմ է դնացել 324 թ.:

ճաշկերույթի և կուրացնելուց ու շղթայելուց հետո բանտարկել ամրոցում, որտեղ էլ նա այնուհետև խոշտանգումների ենթարկվելով կնքել է իր մահկանացուն: Ամիրանոսի այս հակիրճ տեղեկությունը համընկնում է հայկական շատ ավելի համակողմանի ավանդույթի հետ, որը ներկայացված է Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու կողմից<sup>4</sup>, ինչպես նաև շատ ավելի ուշ ժամանակաշրջանի «Սուրբ Ներսեսի վարքագրության» (գլուխ 10) մեջ: Այս ավանդույթը վերստին կյանքի է կոչվել Պրոկոպիոսի մանրագնին պատմումում (Պատերազմների մասին, 1.5.9-40), որը հենվում է «Հայերի գրավոր ավանդույթի» վրա (ή τῶν Ἀρμενίων ἱστορία)<sup>5</sup>, համաձայն որի բերդին շուք է տվել «Մոռացության ամրոց» տպավորիչ անունը (Հայ[երեն] Ան(հ)ուշ բերդ, հուն[արեն] φρούριον τῆς Ἀθήης): Ըստ Փավստոս Բուզանդի և Պրոկոպիոսի՝ այս անունն առնչվում է պարսկական մի օրենքի հետ, ըստ որի գերիների ինքնության հիշատակումն արգելված էր մահվան սպառնալիքի ներքո:

Փավստոսն Արշակի բանտարկության մասին տեղեկացնում է ավելի մանրամասն հենքի վրա: Քանի որ Հայոց թագավորի գործերն այլևս չէին ցանկանում նրան հպատակվել, նա հարկադրված է եղել հանդիպելու արքայից արքայի հետ՝ երկու ժողովուրդների միջև պատերազմն ավարտին հասցնելու համար, որը մինչ այդ պահն ընթանում էր գորավար Վասակի գլխավորությամբ գործող Հայերի կողմից իրագործվող սխրանքներով: Մոգերի և քաղաքացիների խորհուրդներով, արքայից արքան փորձույթյան է ենթարկում Արշակի չեզոքությունը՝ նրան պարտադրելով ստորացուցիչ արարողության նմանվող ինչ-որ մի բան: Վերջինիս հանդուգն հակազդեցության առջև «տայր հրաման Շասուհի արքայ Պարսից, բերել շղթայս, և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ՚ի ձեռս նորա երկաթս, և խաղացուցաներ զնա ՚ի յԱնդմրչն՝ զոր Անուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի»<sup>6</sup>: Հետագայում նա կարգադրում է կենդանի մաշկազերծ անել գորավար Վասակին և նրա ծղոտով լի մաշկն ուղարկում է ամրոց իբրև Արշակի համար սարսափազդու նվեր: Հայաստանի թագավորը կարող էր, այսպիսով, մոռացության մատնվել ամրոցի ստորգետնյա բան-

4 Փավստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ): Բնագիրը Ք. Պատկանյանի. Երևան, 1987, էջ 254-261, 314-315: Մ ո վ ս է ս Խ ո ռ ե ն ա ց ի (այսուհետև Մովսէս Խորենացի): Պատմութիւն Հայոց: Քննական բնագիրը Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1990, էջ 298-301:

5 Այս ավանդույթի մասին տես Ջ. Տրախնա. Փավստոս «Բուզանդացին», Պրոկոպիոսը և «Հայոց պատմությունը».- «Աշտանակ» (Հայագիտական պարբերագիրք). Հ. Գ. Երևան, 2000: Ձնայած առաջին Հայացքից ստացվող տպավորություններին, խոսքը վերաբերում է ոչ թե «Հայերի պատմությանը» հունարեն լեզվով, ինչպես շատերն են կարծել, այլ ավանդույթների ամբողջությանը (Die Fragmente der griechischen Historiker 679.3-4), որոնք արտացոլում էին, անկասկած, ավելի շուտ հայկական, քան հռոմեական գգայունություն: Պրոկոպիոսի հաղորդումը շատ ընդհանուր կետեր ունի Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» հետ: Այս բնագիրը, բացառությամբ «էպիկական» ոճի (ընդհանուր առմամբ տես N.G. G a r s o i a n. The Epic Histories Attributed to P'awstos Buzand (Buzandaran Patmut'iwkn'). Cambridge, Mass., 1989), ներկայացնում է, իհարկե, մեծ զգայունություն իրանական ավանդույթի իրավաբանական կոնկրետ փաստերի համար, ինչպես «ընչազուրկների հովանավորի» նշանակման պարագայում, որն ուսումնասիրվել է Գարսոյանի կողմից (N.G. G a r s o i a n. Sur le titre de Protecteur des pauvres.- "Armenia between Byzantium and the Sasanians". London, 1985):

6 Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, էջ 260:

տոււմ և պատմութեան մեջ, եթէ չլինէր նրան ամենանվիրված բարձրաստիճան անձանցից մեկի՝ Դրաստամաս անունով մի հայ ներքինի միջամտութիւնը, որը Շապուհի արշավանքի ժամանակ բռնութեամբ Պարսկաստան էր տարվել, քուշանների դեմ մղվող ճակատամարտի ժամանակ բանակ զորակոչվել ու դարձել հանրահայտ վրկելով արքայից արքայի կյանքը: Վերջինս նրան հանդիսավոր ձևով ասել էր. «Խնդրեցա դու ինչ յինչն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից»: Այդժամ է, որ Դրաստամասը Շապուհից իր միասկանին Անհուշ բերդում այցելելու և դռնէ մեկ օր նրան շղթայադերձ անելու ու նրա դիրքին արժանի ճաշկերույթով մեծարելու թույլտւութիւն է խնդրել: Շապուհը, թեպետ բարկացած, ի կատար է ածել այդ ցանկութիւնը, սակայն ճաշկերույթի ավարտին Արշակն ինքնասպան է եղել: Ինչ վերաբերում է Պրոկոպիոսին, ապա նա առաջադրում է, ըստ էութեան, համանման վարկած, այդուհանդերձ, առանց անունների շուրջ մանրամասներ հաղորդելու: Դրաստամասը միայն ակնարկվում է իբրև τῆς Ἀρμενίων կամ ὁ Ἀρμένιος (1.5.30: 35), այն դեպքում, երբ արքայից արքան անվանվում է Πακούριος (1.5.10)<sup>7</sup>:

Արշակի հաջորդը՝ Խոսրով III-ը, ևս ամբողջ բանտարկյալն է եղել: Մոփսես Խորենացին պատմում է, որ թագավորը մտադրութիւն է ունեցել խախտելու այն սլայմանագիրը, որը հանգեցրել է Հայաստանի բաժանմանը (387 թ. շրջանում): Այսպես, Շապուհն ուղարկել է իր որդի Արտաշիրին, և քանի որ կայսր Արկադիոսը հրաժարվել էր օգնել Խոսրովին, վերջինս, հինգ տարի թագավորելուց հետո, սլաւսից իշխանի կողմից գահընկեց է արվել: Խոսրովը հարկադրված հետևել է նրան Տիղբոն և հետագայում՝ իբրև բանտարկյալ հայտնվել ամրոցում<sup>8</sup>, որանդ շղթայված է մնացել մինչև Արտաշիրի մահը: Թեպետ նա ազատվել է իր շղթաներից, այդուհանդերձ, այնտեղ բանտարկված է մնացել մինչ այն պահը, երբ Հագկերտը կարողացել է նրան վերականգնել գահի վրա<sup>9</sup>: Խոսրովի հետ մեկտեղ կալանավորված է եղել Սպանդարատի որդին՝ ազնվաբարո և քաջարի Գազավոնը: Վերջինս իր մահկանացուն կնքել է բանտում, իսկ նրա որդի Հրահատը, որը դտնվում էր այնտեղ նրա կողքին, հետագայում արտաքսվել է Սակաստան<sup>10</sup>: Ազնվաբարո Պարզե Ամատունին, ինչպես նաև Գազավոնի եղբայր Շավարչը, Խոսրովին ազատելու համար դարանամուտ են եղել, սակայն անհաջողութեան են մատնվել, որովհետև վերջինիս ոտքերի շղթաներն արգելքներ են հարուցել: Հետևել է մի մարտ, որի ընթացքում Շավարչը սպանվել է, իսկ Պարզե Ամատունին գերեզմարվել: Արտաշիրը «տիկտեսակ գործեալ ուռուցմամբ հրամայեաց զնել յանդիման Խոսրովայ հանապագ»<sup>11</sup>: Նրա դին արժանացել է միևնույն ճակատագրին, ինչ զորավար Վասակի դին:

Մոտավորապես 496 թ. շրջանում ամրոցը «հյուրընկալել» է նաև սասանյան նախահորից սերող հյուրի գահընկեց արված թագավոր Կավա-

7 Շրջադասութեան պատճառների մասին տե՛ս Զ. Տրախնա. նշվ. աշխ., էջ 410, ծան. 35:

8 Մոփսէս Խորենացի, էջ 320–321:

9 Նույն տեղում, էջ 329:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում, էջ 321:

տին, որին ազնվականները գերադասել են խնայել խուսափելու համար թագավորական արյուն հեղելուց: Այդուհանդերձ, թագավորին հաջողվել է փախչել և տիրել իր դահին (Պրոկոպիոս, Պատերազմների մասին, 1.5.7., 1.6.1-9, Ադաթիաս, 4.28.1-8, Տաբարի, 135-8, 143-5)<sup>12</sup>: Ըստ Պրոկոպիոսի և Ադաթիասի ավանդույթի, Կավատի կինը գայթակղել է բերդակալին (ὁ τοῦ φρουρίου ἀρχῶν)<sup>13</sup>, որը նրան թուլլաարել է մտնել ամուսնու բանտախոցը, ուր նրանք կարողացել են զվեստափոխվել, ինչն, այսպիսով, Կավատին հնարավորություն է ընձեռել փախուստի դիմելու<sup>14</sup>: Այս երգիծական պատումը քննարկվել է տեղական սկզբնաղբյուրներում, որոնք, այդուհանդերձ, ինչպես մատնանշում է նույն Պրոկոպիոսը, չեն համընկնում բաղում կետերում, ինչպես, օրինակ, բանտում մնացած կնոջը պատժի ենթարկելու հարցում (Պատերազմների մասին, 1.6.9. οὐ γὰρ ὁμολογοῦσι Πέρσαι ἀλλήλοις)<sup>15</sup>:

VI դ. ի վեր, թվում է, թե Անհուշ բերդը ձեռք է բերում որոշակի հանրաճանաչություն, որը միանգամայն օրինաչափ էր: Ադաթիասը պատմում է առանց այլ բացատրություններ տալու, տեղանքի մասին այնպես, կարծես այդ տեղեկությունն իր ընթերցողներին հայտնի է: Այս համբավն անկասկած պայմանավորված է Պրոկոպիոսի տպավորիչ սլատումով, սակայն ակնհայտ է, որ առնվազն IV դ. ի վեր, Սասանյան կայսրությանը վերաբերող տեղեկությունների մի մասը, որոնք հաղորդվել էին այն ավանդույթների միջոցով, որոնց վրա հենվում է Պրոկոպիոսը, իսկ ընդհանուր առմամբ հաղորդակցությունների միջոցների զարգացման շնորհիվ, առնչվում էր այս տեղանքին<sup>16</sup>:

Թեոփիլակտոսը ճշգրտում է բանտի գտնվելու վայրը և այն՝ իբրև «գոթախտություն մեջ գտնվող մարդկանց խառնիխուռն համախմբման վայր» (3.5.2), նկարագրում այնպիսի հենքի վրա, որը կարելի է թվագրել

12 Պատմական հենքի մասին տե՛ս G. G r e a t r e x. Rome and Persia at War. 502-532. Leeds. 1998. p. 51. Այս միջադեպի մասին, առանց ամրոցի անունը հիշատակելու. հաղորդում է նաև Ժողյուե Ստրիտին վերադրվող ասորական ժամանակագրությունը (§ 24). տե՛ս Լյուկեթի մեկնաբանությունը (A. L u t h e r. Die syrische Chronik des Josua Stylites. Berlin-New-York, 1997. p. 146-152): Իսուսոբֆի ծանոթագրությունը Տաբարիի հատվածի առթիվ (C. E. B o s w o r t h. The History of al-Tabarī. T. V. The Sasanids, the Byzantines, the Lakhmids, and Yemen. New-York, 1999, p. 135, n. 436) շատ բան չի ավելացնում նույնքան մեկնաբանությանը. դեռ ավելին, նա «Թեոփրաստես» է գրում այնտեղ, որտեղ հարկ էր գրել «Թեոփիլակտես»:

13 Տե՛ս Սուրբ Անաստասի ներքողը (Bibliotheca Hagiographica Graeca, 86 § 37. այսուհետև հարադրանքում՝ BHG), որտեղ բանտի կառավարիչն անվանվում է «archonte». B. F l u s i n. Saint Anastase le Perse et l'histoire de Palestine au debut du VIIe siecle. T. I. Paris, 1992, p. 244.

14 Իհարկե, բանտերի վերակացուներն անկաշառ չէին. տե՛ս Փրուսինի նշած պարադաները. B. F l u s i n. Նշվ. աշխ., էջ 180, ծան. 136:

15 Ադաթիասը հղում է Պրոկոպիոսին, այդուհանդերձ առաջարկում զվարճալի սլաոու՝ մի իր տարբերակը (4.28.3: αλλο Καβαδης ουκ ες μακραν αποδασας, ειτε της γαμετης αυτω̄ ξυλλαβομενης τουδολου, ως Προκοπιός φησι, και τον υπέρ εκείνου θανατου υπελθειν ελομενης, ειτε και άλλω χρησάμενος τρόπω, αποδράσας δε ουν ὁμως κτλ.):

16 Ընդհանուր առմամբ տե՛ս A. D. L e e. Informations and Frontiers. Roman Foreign Relations in Late Antiquity. Cambridge, 1993. Տաբարին, որն ավելի լավ տեսիլ է, ասում է, որ կինը եղել է թագավորի քույրը, բայց դա անվերապահ հակասություն չէ. քանզի Սասանյան Պարսկաստանում ամուսնությունները եղբոր և քրոջ միջև օրինական էին:

578 թ. շրջանում: Թեոփիլակտոսը նշում էր բանտարկյալների ծաղումը, որովհետև ամբողջ ընդունում էր Καδασηνοί-երին կամ կաղուսիներին (կառպից ծովի շրջանի իրանական ժողովուրդ), Դարայի բնակիչներին, քաղաք, որը դրավիվ է 573 թ., «իսկ ի թիվս ոչլոց՝ այլ մարդկանց, որոնք բաժանում էին այդ ախուր ճակատագիրը»: Շնորհիվ Դարայի մարդկանց քաջության, բանտարկյալներին հաջողվել է հաղթել վերակացուներին և փախուստի դիմել (3.5.4-7)<sup>17</sup>:

Արրերի վարքագրության ավանգույթում ակնարկվում են երկու այլ բանտարկյալներ ևս. Գոլի(ա)նդուչը († 591), ինչպես նաև Ղևոնդ Նապոլիացու՝ 641 թ. որոշ ժամանակ անց գրված «Սուրբ Հովհաննես Ողորմածի վարքում» հիշատակված մի անանուն կիսյրոսցի: Գոլինդուչը սուրբ Շիրին կարեկցող<sup>18</sup> և, հավանաբար, մոգերի ընտանիքին պատկանող ազնվական կին էր «Բաբելոնից»<sup>19</sup>: Երբ մի տեսիլքից հետո նա քրիստոնեական հավատի է դարձել՝ ամուսինը նրան մատնել է արքայից արքա Խոսրով «Մերին», այն է՝ Խոսրով Անուշավանին: Վերջինս, ամեն ինչ անելուց հետո, որպեսզի նրան համոզի զղջալ ուրացության համար կալանավորել է բերդում<sup>20</sup>: Այնտեղ նա, հավանաբար, բավական ժամանակ է անցկացրել, որպեսզի ուսումնասիրի և սովորի հին ասորական Սաղմոսագիրքը<sup>21</sup>: 579 թ., Խոսրովի մահից հետո, բյուզանդական մեծատոհմիկ Արիստոբուլին հաջողվել է թափանցել բանտախուց: Գոլինդուչը գուրս է եկել ամբողջ նոր թագավոր Որմիզդ VI-ի հրամանով և ժողովրդի առջև ենթարկվել սարսափելի խոշտանգումների<sup>22</sup>:

Անհավանական է թվում կիսյրոսցի բանտարկյալին վերաբերող ուսանելի երգիծական պատումը, որի մասին պատմում է սուրբ Հովհաննես Ողորմածը՝ պատմում է հավաստելու համար այն պատարագների կարևորութունը, որոնցով նշվում է հանգուցյալների հիշատակը (ΣΥΝΑΞΙΣ): Անորոշ հանգամանքներում, որոնք սակայն հարկ է վերագրել 610–611 թթ. ի վեր տեղի ունեցած պարսկական արշավանքի ժամանակաշրջանին, մի անհայտ անձնավորութուն կարող էր գերեզմարվել պարսիկների կողմից և բանտարկվել «Անհուշ կոչվող բանտում»: Նրա հայրենակիցները՝ գժբախտության ուղեկիցները, որոնց հաջողվել էր փախչել, սխալմամբ կիսյրոսցու ընտանիքի անդամներին հաղորդել էին նրա մահվան լուրը. վերջիններս Պայծառակերպման, Զատիկի և Հոգեգալուստի տոների առթիվ սկսել էին հոգեհանգստի արարողութուն կատարել: Երբ, վերջապես, չորս տարվա բանտարկութունից հետո մարգուն հաջողվել է փախչել, նա պատմել

17 Փոթը դիպվածն ամփոփում է այսպես. Γίνεται τε κατά τὸ φρούριον Γιλίγερδῶν τῶν δεσμωτῶν Ρωμαίων ἀριστεία (I, p. 85.13-5.28b). Բյուզանդական պատմագրության մեջ պարսկական սկզբնաղբյուրների օգտագործման մասին տե՛ս M. M a n c i n i. Tra linguistica e filologia: nomi orientali in fonti bizantine. Napoli, 1998, p. 7, n. 19.

18 P. D e v o s. La jeune martyre perse sainte Širin († 559).– ABoll 112, 1994, p. 10.

19 P. P e e t e r s. Նշվ. աշխ., էջ 105:

20 Վրացական «Վարքագրութունն» ավելացնում է, որ կինը զրկվել է իր ունեցվածքից (G. G a r i t t e. La passion georgienne de sainte Golindouch.– ABoll 74, 1956, p. 430):

21 Այս տեղեկության ճշմարտացիության մասին տե՛ս P. P e e t e r s. Նշվ. աշխ., էջ 85:

22 G. G a r i t t e. Նշվ. աշխ.:

է, որ այգ տոնակատարութիւնները ընթացքում, հիրավի, «ճերմակագ-  
րեստ և արևի նման փայլատակող մի էակ»՝ առանց որևէ մեկի կողմից տե-  
սանելի լինելու, իրեն ազատ է արձակել շղթաներից: Այսպիսով, աղոթքնե-  
րի պահին բանտարկյալը կարող էր ազատութեան մեջ անցկացնել ամբողջ  
օրը, սակայն հաջորդ օրը նա վերադառնում էր շղթայակալ բանտարկյալի  
իր կացութեանը:

Այս պատումների ոչ այնքան հավանական յուրահատկութիւնը կարող  
է մեզ դրդել խորհելու, որ Անհուշ բերդի մասին հիշատակումը սրբերի  
վարքագրութեան հենքերի վրա գրական հնարանք է, որը պատումին մեծ  
կարևորութիւն հաղորդելու համար օգտւում էր տեղանքի չարագուշակ  
համբավից<sup>23</sup>: Հիրավի, Գոլինդուշի պարագայում, բանտը հիշատակւում է  
բացառապէս հունական «Վարքում», որի առաջին խմբագրութիւնը  
Եվստրատիոսի աշխատութիւնն է (BHG 700-2)<sup>24</sup>: Թեոփիլակտոսի զուգա-  
հեռ վկայութիւնը սահմանափակւում է «մույլ բերդի» մասին հիշատա-  
կութեամբ (ἐν εἰρκτῆ σκληρᾶ, 5.12.10): Գոլինդուշի բանտարկութիւնը,  
այնուամենայնիվ, ճշմարտանման է, եթե նկատի ունենանք նրա ազնվա-  
կանական ծագումը: Հայր Փեթերսը, որն այլ բանաստեղծութիւնների պա-  
րագայում քննադատում է պատումի պատմականութիւնը, այս պարագա-  
յում, ընդհակառակը, հակված է դա ընդունելու, կարծելով, որ Թեոփիլակ-  
տոսը կարող էր Եվստրատիոսից սկիզբ առնող՝ սրբերի վարքագրութեան  
պատումի վերաբերյալ գիտակցաբար անբոնադրոսիկ լռութիւն պահա-  
նել: Նա նույնիսկ հանդգնում է ենթադրել, թե Գոլինդուշի և Դարայի  
բանտարկյալների միջև հանդիպում է կայացել<sup>25</sup>: Վերջին հաշիւով, Անհուշ  
բերդի բանտարկյալներին վերաբերող վկայութիւնները ներկայացնում են  
ճշմարտանման պատմական հետախորք, որը խարսխւում է դլխավորա-  
պէս սեղական սկզբնաղբյուրների վրա: Միայն Ղևոնգի հաշիւութ-  
իւնն է կասկածելի տարրեր սլարունակում և կարող էր ողբնչվել Թեոփի-  
լակտոսի կողմից նկարագրված բանտարկյալների խոսվութեամբ, որը  
սկիզբ է առնում Հովհաննես Եսիփանիացուց (Muller, Fragmenta historico-  
rum Graecorum IV 272-6)<sup>26</sup>:

Ինչպէս տեսանք, բնագրերի մեծ մասը հիշատակում է ամրոցի պատկե-  
րավոր, սակայն, հավանաբար, կեղծ անունը՝ անվանելով այն Անհուշ  
բերդ<sup>27</sup>: Պրոկոսիոսը (Պատերազմների մասին, 1.5.8) և Թեոփիլակտոսը  
(3.4.2) որոշակիորեն մատնանշում են, որ Աղթոնը պարսիկների մոտ բան-  
տի անունն էր՝ ի տարբերութիւն Ամիանոսի ավանդույթի, որը տեղանքը  
բնորոշում է իբրև Ագաբանայի ամրոց: Այս առթիւ, Փեթերսը հղացել է

23 VII դարասկզբին, Սասանյանների կողմից Պաղեստինի գրավման ընթացքում, բան  
տարկութեան եղանակների մասին տե՛ս B. F l u s i n. Նշվ. աշխ., հ. II, էջ 123, 234, 241:

24 Եվստրատիոսը հիշատակված է Դիոնիսիոսի ձեռագիր հիշատակարանում՝ էջ 145.  
տե՛ս P. P e e t e r s. Նշվ. աշխ., էջ 80:

25 Նույն տեղում, էջ 84, 99:

26 M. W h i t e y. The Emperor Maurice and his Historian. Theophylact Simocatta on Per-  
sian and Balkan Warfare. Oxford, 1988, p. 233. Տե՛ս նաև N. H. B a y n e s. The Literary Con-  
struction of the History of Theophylactus Simocatta // Ξένια. Hommage international à l'Univer-  
sité nationale de Grèce à l'occasion du 65eme anniversaire de sa fondation (1837-1912). Athènes,  
1912, p. 35.

27 Տե՛ս ստորև կլուզիա Ա. Ջիանկալիսիի ծանոթագրութիւնը:

միջին պարսկերենի՝ agobak, agōbākih («Համր»), լեմմաների հետ Համեմատությունն անցկացնելու գաղափարը, սակայն իրականում այս բառերն արտահայտություն միջոցից զուրկ են<sup>28</sup>:

Ինչ վերաբերում է Փափստոսի Անգմըշ անվանը (թեպետ գոյություն ունի Ընդմըշ տարբերակը<sup>29</sup>), Հյուբշմանն առաջարկել էր նախնական Անգիմիշ տարբերակը, որը Դիաջուլ քաղաքի հնագույն տեղանունն է<sup>30</sup>, իսկ արաբական սկզբնաղբյուրներն, ի դեպ, հիշատակում են Անդամիշ տեղանունը<sup>31</sup>: φρούριον τῆς Λήθης-ի հայերեն համարժեքը, ինչպես ասում են, «Անուշ բերդ» է, որի գրությունն ձևն ուղղվել է «Անհուշ» «Մոռացություն» ձևով, որն այդուհանգերձ դեհիզացում է: Գրությունն այս երկու ձևերը անդ են գտել ձեռագիր ավանդույթի մեջ ինչպես Փափստոսի, այնպես էլ Մովսես Խորենացու մոտ, որը երեք անգամ հիշատակում է «յԱնուշն կոչեցեալ բերդ» ձևակերպումը<sup>32</sup>, բայց 3.55 դիսում մատնացույց է անում, որ Գաղափունի որդի Հրահատը տարվել է «յԱնյիշելի ամրոցէն»:

Տեղանքի ճշգրտումն իրականացվել է Թեոփիլակտոսի կողմից, որն ամրոցը տեղադրում է Մեդիայի ներքին նահանգներում՝ Բիդան (արամեերեն)՝ *Bet Hūzāyē*<sup>33</sup> տարածաշրջանում, Բենդոսարոհա (Gundisahpuhr) քաղաքից ոչ հեռու, Γιλίγερδα բերդի մոտակայքում<sup>34</sup>: Փափստոսի կողմից իբրև Խոմիստան մատնանշված տարածաշրջանը<sup>35</sup> համընկնում է այն տարածքին, որը նախկինում հույներին հայտնի է եղել իբրև Շոշք<sup>36</sup>: Ոչ հեռա-

28 P. Peeters. Նշվ. աշխ., էջ 84, ծան. 3, տե՛ս H.S. Nyberg. A Manual of Pahlavi. II. Ideograms. Glossary, Abbreviations, Index, Grammatical Survey, Corrigenda to Part I. Wiesbaden, 1974, p. 10:

29 Ըստ Վենետիկի Հրատարակության (1933) ցանկի, ձեռագրերի տարբերակներն են Անուշ/Անհուշ և Անգմըշ/Ընդմըշ, տե՛ս N.G. Garsonia. The Epic Histories..., p. 443.

30 H. Hübschmann. Armenische Grammatik. I: Armenische Etymologie Leipzig, 1897, S. 19; տե՛ս A. Christensen. Նշվ. աշխ., էջ 308:

31 P. Peeters. Նշվ. աշխ., էջ 99:

32 Մ ո Վ ս է ս Խ ո Ր Ե Ն ա ց ի, նշվ. աշխ., էջ 300, 321, 329:

33 Th. Nöldeke. Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden aus der arabischen Chronik des Tabari übersetzt und mit ausführlichen Erläuterungen und Ergänzungen versehen. Leiden, 1879, S. 144, n. 1.

34 Միշել Ուիթբիյն և Մարի Ուիթբիյն (M. Whitney, M. Whitney. The History of Theophylact Simocatta. An English Translation with Introduction and N.s. Oxford, 1986, p. 77) «Դիլիգերդոնը» թարգմանում են նկատի ունենալով το Γιλίγερδων, ինչպես ոչ հեռավոր անցյալում դը Բուրի տեղեկատուն (C. de Boor (reed. P. Wirth). Theophylact Simocatta. Historia. Stuttgart, 1972, p. 323): Իրականում խոսքը վերաբերում է \*Γιλίγερδա տեղանունի սեռական հոլովին (տե՛ս P. de Lagarde. Gesammelte Abhandlungen. Leipzig, 1866, S. 195, n. 1): Լադարդը, սակայն, առանց մտահոգվելու աշխարհագրության մասին, թարգմանում է "gilanisches schloss" (Th. Nöldeke. Նշվ. աշխ., էջ 144, ծան. 1): Մարկվարտը (J. Markwart. Sudarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen. Wien, 1930, S. 44) քննադատում է Ջ. Ֆոն Համմերի պատրանքները (J. von Hammer. Geschichte des osmanisches Reiches. Bd. II, S. 448), որը տեղանքը տեղադրում է Հիւն Կայֆայի ժայռի վրա գտնվող նախկին ամրոցի մոտակայքում արժեփոքելով «Հասան Քեֆ» տեղանունը, որն իրականում արդիական ձևափոխում է (Հախերեն) քեֆ, նշանակում է «լավ տրամադրություն», բայց նաև «գժբախտությունների մոռացում»):

35 Փափստոս Բուղանդ, էջ 310:

36 N.G. Garsonia. The Epic Histories..., p. 503.

վոր անցյալում Ռաուլինսոնը ճշգրտել է տեղանքի վայրը և այն տեղագրել Գիլգիրգում՝ Շուշտարից արևելք ձգվող լեռներում<sup>37</sup>:

Պարսիկները սկսեցին և ամրացրեցին բնորոշելի իբրև *zendān*, որը միջին պարսկերեն բառ է (իմա՝ «բանտ»), որի նախնական «ղինանոց» իմաստը սկիզբ է առնում *zen* (զենք) բառից<sup>38</sup>: Պարտագրվող բոլոր վերապահութ-յուններով հանդերձ, մենք, հավանաբար, կկարողանանք *zēndān*-ը դիտել իբրև բանտ-ΦΡΟΥΡΙΟΝ-ի ավելի ընդարձակ նշանակություն ունեցող լեմ-մա, որը, հետևաբար, ղանաղանվում է բանտարկության վայրի՝ միջին պարսկերենի բառապաշարի այլ տարրերից, ինչպիսիք են *griftar*-ը (*griftan*-«վերցնել» բառից) կամ *dastgir*-ը (*dast*-«ձեռք» և *griftan* բառերից), որոնք մատնանշում են բանտարկյալի նկատմամբ վերահսկողությունը կամ սլավթ[ևերեն]՝ *bndyst'n*-ը («շղթաների վայր»՝ *band*=vinculum բառից), որն առնչվում է շղթաների օգտագործմանը<sup>39</sup>: Հայկական սկզբնաղբյուրներն օգտագործում են «բերդ» կամ համանուն «ամրոց» բառերը<sup>40</sup>: Պրոկոպիոսը և Ագաթիսան այն բնորոշում են իբրև *φρούριον*, հունահռոմեական ձևով, Ագաթիսան (4.28.3) օգտագործում է նաև *δεσμωτήριον* բառը: Թեոփիլակ-տոսը ևս (3.5.2) գիմսում է հունահռոմեական պամագրության բառապա-շարին և *Λήθη*-ը բնորոշում իբրև *είρκτη*, անգամ՝ բացառապես բանտար-կության վայրի համար նախատեսված մի կառույց, որը գտնվում էր Գիլի-գերգայի *φρούριον* մոտ<sup>41</sup>: Հետագայում, նա, այնուամենայնիվ, այն բնո-րոշում է իբրև *φρούριον* (3.5.3 e 5): Սուրբ Հովհաննես Ողորմածին վերա-բերող սրբերի վարքագրության ավանգույթը հաղորդում է *τήν φυ-λακήν τήν καλουμένην Λήθην արտահայտությունը*<sup>42</sup>, որը համանման է *Մովսես Խորենացու կողմից հաղորդված «յԱնուշն կոչեցեալ բերդ»*<sup>43</sup> ար-տահայտությանը:

Կավատի կալանավորման վայրը Եվթյուբիոսը բնութագրում է իբրև «մի վայր, ուր ոչ մեկը գնալու թույլտվություն չունեն» (II.176 Pococke), այն գեպքում, երբ Տաբարին մատնանշում է ամրոցն իբրև «մի վայր, որի անունը ոչ մեկը չէր կարող հիշատակել» (142 Noldeke): Այս անորոշ բա-

37 T. H. N o l d e k e. Նշվ. աշխ., էջ 144, ծան. 1: Սասանյան դարաշրջանի դիցաբա-նությունը ծանոթ է եղել միևնույն տարածաշրջանում գտնվող մեկ այլ պետական բանտ՝ *zendān i Askān* անունով, որը Խուսթիսանում գտնվող Նահր-Թիրաք քաղաքի մոտակայքում էր և դարձել էր «էրան թագավորության հարեմն ու բանտը Ազի գետի, այն է՝ *Azi-dahak* (*Sahristāniha i Eran*) չարագուշակ վիշապի տիրապետության պատճառով» (տե՛ս J. Markwart. Նշվ. աշխ., էջ 13):

38 H. S. N y b e r g. Նշվ. աշխ., էջ 231:

39 Համանման ձևով հռոմեական իրավունքում օգտագործվում են կամ «*carcer*» (բանտ), կամ «*vincula*» (շղթա) բառերը՝ առանց ակնհայտ զանազանության (T. H. M o m m s e n. *Romisches Strafrecht*. Berlin, 1899. S. 960):

40 Այս արտահայտությունների (ինչպես նաև «*amur*» արտահայտության) մասին տե՛ս N. G. G a r s o i a n. *The Epic Histories...*, p. 506, 517.

41 Մարկվարտը (J. M a r k w a r t. Նշվ. աշխ., էջ 47) հուշում է պարսկական «*Gil-gerd*» տեղանունը («արորված հողից պատրաստված»), այն դեպքում, երբ Փելթերսը (P. P e e t e r s. Նշվ. աշխ., էջ 99) առաջարկում է «*Girdkert*» տեղանունը («կտր կառույց»):

42 A. J. F e s t u g i e r e, L. R y d é n. *Vie de Symeon le Fou et Vie de Jean de Chypre*. Paris, 1974, § 24; Delehaye, § 38.

43 Մ ո վ ս է ս Խ ո Ր Ե Ն ա ց Ի, էջ 300, 321, 329:



նաձևերն Ավերիել Կամերոնի կողմից մեկնաբանվել են որպես դիտավորյալ թերասուլթյուն՝ պայմանավորված ամրոցի անունը ճշգրտորեն հիշատակելու արդեյլքով<sup>44</sup>: Իրականում, խոսքն իր աեսակի մեջ միակ, ըստ պարսկական կանոնների՝ բանասարկության համար նախատեսված անմատչելի վայրի չէր վերաբերում: Իրոք որ, “Nikadum Nask”-ի գաապարամանը վերաբերող չորրորդ բաժինը (Hamemālistan) գովաբանում է «սարսափելի և անմատչելի վայրում, վնասակար էակների հարևանությամբ» բանասարկությունը (Denkart 9.19.44)<sup>45</sup>:

Ամրոցը կառավարվում էր մի պաշտոնյայի կողմից, որին Պրոկոպիոսն անվանում է ὁ τοῦ φρουρίου ἀρχῶν (Պատերաղմների մասին, 1.6.2), որն ակնհայտ ձևով վերարտագրում է zendānpān իրանական արտահայտությունը: Բանտ-ամրոցի համար պատասխանատվություն կրող անձինք, որոնք կոչվում էին նաև zynd'nyk (=zendānik), բավականին բարձրաստիճան էին, ինչպես այդ մասին վկայում է Քաաբա-ի-Ջարդուշաի արձանագրությունը, ուր հիշատակվում է Շապուհի ծառաների ցուցակում նշված արքունական պաշտոնյա zendānik Նադուր<sup>46</sup>: այս պաշտոնյան, հավանաբար, նմանություն ուներ χιλίαρχος-ի հետ, որը հայտնի է սուրբ Անաստասի հնագույն վավերագրերի շնորհիվ<sup>47</sup>: Պարսկական իրավական մեկնությունը պարզաբանել է zendānpān-ի պարտականությունները, իսկ «Մատյան ի հազար դատաստան» վերնադիրը կրող միջին պարսկերեն բնագիրը այն բանտապետի համար, որը բանտարկյալին թույլ կտար փախուստի դիմել, նախատեսում է պատիժ (ամենայն հավանականությամբ մահապատիժ), եթե վերջինս «վերստին չհայտնվի»՝ գատարան ներկայանալու համար (A 13, 9-11):

44 A. C a m e r o n. Agathias and the Sassanians. – “Dumbarton Oaks Papers” 23-4, p. 157.

45 E. W. W e s t. Pahlavi Texts. Part IV. Contents of the Nasks. Oxford, 1892, p. 49. Տե՛ս A. C h r i s t e n s e n. Նշվ. աշխ., էջ 307: Dēnkart-ում պահպանված կանոնների համառոտ շարադրանքի մասին տե՛ս A. P e r i k h a n i a n. Farraxmart ī Vahraman. The Book of a Thousand Judgements (a Sasanian Law-book). Costa Mesa (Ca.)-New York, 1997, p. 19, n. 8. Այս գործելաձևն արտացոլվել է «Գուլինդուշի վարքում» (§ 12-14). Հրապարակյալներն խոչանդվելուց հետո, սուրբը չորս ամիս պահվել է քարանձավում, որտեղ բնակվում էր մի վիրշապ: Քանի որ նա կարողացել է սիրաշահել նաև վիրշապին, նրան բանտարկել են մեկ այլ «կործանարար վայրում»:

46 SKZ mp. 24 (zyndnyk, pa. 24; τοῦ Ππι τῶς φυλακῶς, γρ. 65). Բաքը (M. B a c k. Die sassanidischen Staatsinschriften. Studien zur Orthographie und Phonologie des mittelpersischen des Inschriften zusammen mit einem eymologischen Index des Mittelpersischen Wortgutes und einem Textcorpus der behandelten Inschriften. Leiden-Teheran-Liege, 1978, p. 277, 364) թարգմանում է “Herr des Staatsgefängnisses”: Համանման մի արտահայտություն՝ պաշտոնյաների, վիճվորների և արհեստավորների ցուցակում, հավաստում է Դուրայի օստրակոնը (H 615): Տե՛ս J. H a r m a t t a, M. P e k a r y. The Decipherment of the Parsik Ostrakon from Dura-Europos and the Problem of the Sasanian City Organization // La Persia nel Medioevo. Atti del convegno. Roma, 1971, p. 468; F. G r e n e t. Les Sassanides à Doura-Europos (253 ap. J.-C.). Reexamen du materiel épigraphique du site. – “La géographie historique au Proche-Orient”. Paris, 1988, p. 144, 154, n. 178, տե՛ս նաև E. K h u r s h u d i a n. Die parthischen und sasanidischen Verwaltungsinstitutionen. 3. Jh. v. Chr.-7. Jh. n. Chr. Erevan, 1998, S. 142. Խուրշուդյանը թարգմանում է “Gefängnisauferer”:

47 Քննարկումներ Ֆլուսինի մոտ. B. F l u s i n. Նշվ. աշխ., էջ 176, ծան. 124:

Ավելի բարձր է *zendānpan*-ի արտոնություններին վերաբերող հարցը: Այստեղ իրավաբանական ուսմունքն ավելի հակասական է (A 28.11-29.5): Ոմանք զանուկ էին, որ նա պետք է սահմանափակվեր բանտարկյալների վերահսկողությունն ապահովելով (*būt kē guft kū ēvac pat dārisn i pat zendān ēvar*), այն դեպքում, երբ, ըստ այլոց, նա պատասխանատու էր նմանապես «անհատի» կամ նաև բանտարկյալի ինքնություն, նրա ազգանվան և զանցանքի պարզաբանման համար (*ut būt kē guft ku pat-ic hamtanih u hamnamih u hamvinasih ēvar*): Համաձայն սուրբ բնագրերի մեկնիչների՝ *dastāḅaran*-ների կարծիքի, բանտապետի արտոնությունները (*han ēvarih ī zendānpān*) տարածվում էին կալանավորի ինքնություն պարզաբանման վրա (*pat hamtanih han bavet*): Հիշատակված օրինակները ցույց են տալիս, որ որևէ մեկի կողմից այլ մարդու ինքնություն վերադրումն ամենամեծ խիղախումբներից էր: Նրանք, ովքեր հակված էին ընդլայնելու *zendānpān*-ի վճռորոշ իշխանությունը, նրան էին վերագրում, ըստ այդմ, բանտարկյալի ինքնություն ճշգրտման իրավունքը՝ երեք չափանիշների հիման վրա, որոնք համապատասխանում էին, հավանաբար, բանտի դիվանի կազմավորմանը. դրանք են՝ կալանավորման տարեթիվը, բանտարկյալի ազգանունը և դատապարտման տեսակը<sup>13</sup>: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ Անհուշ բերդի պարագայում, բանտարկյալների անունը հիշատակելու արգելքը պետք է առաջ բերեր իրավաբանական խնդիր, որն անտեսելն անհնար է:

Ի դեպ, ըստ սկզբնաղբյուրների, կարելի է առանձնացնել ամրոցում բանտարկություն նվազագույնը երկու հստակ եղանակ: Մի կողմից՝ շղթաներով կալանավորումը, որը նախատեսված էր «երկաթե դիմակների», ինչպես նաև, և դա միանգամայն հավաստի է, կրոնական կոսլիտ զանցանքների համար: Մյուս կողմից՝ գոյություն ունեցող կալանավորման ավելի մեղմ ձև, յուրօրինակ վերահսկողություն, որը վերապահված էր արքայազների կամ իշխանների, ինչպես նաև դաշնակից համայնքների անվանի մարդ-

48 Եռակի ստուգումն ակնհայտորեն մի միջոց էր, որը սլամանավորված էր բանտի փերձանրաբեռնվածությունը, որտեղ, հավանաբար, տիրում էին միևնույն պայմանները, ինչ *Լիբանոսի կողմից որոշ չափազանցություններով նկարագրված Անտիոքի բանտում* (J.-U. K r a u s e. Gefangnisse im Römischen Reich. Stuttgart, 1996. S. 64, ն ու յ ն ի՝ Prisons et crimes dans l'Empire romain // Carcer I. Prison et privation de liberte dans l'Antiquite classique // Acte du colloque de Strasbourg (5 et 6 decembre 1997): Համակարգը ճշգրտումների որոշակի հնարավորություն էր ընձեռում և խուսափում էր համանունություն սխալներից, որոնք, եթե նկատի ունենանք Իրանում գոյություն ունեցող համակարգերի ընդունելությունը, պետք է հաճախ իրեն զգալ տար: Միջին սլամաններին բնագիրը քննարկում է հենց մասնակի համանունություն մի սլաման, որը հանգեցրել էր երկու բանտարկյալների գոյություն մեջ մեղանչածին (*pat dūz*) և կարևոր զանցանքի համար դատապարտվածին (*pat margarzan*) միմյանց հետ շփոթելուն: Բանտն, այսպիսով, ծառայում էր իբրև ինչպես պատի, այնպես էլ նախնական կալանավորման վայր: Թվում է, թե բանտարկյալների ինքնություն ճշգրտումը կասկած էր նաև այն սլամանի հետ, որը ներկայացված է A.13.13-5-ում, որտեղ հարցաքննությունից հետո դատավորն արդարացնում էր բանտարկյալին: Վերջինս չի կարող, այդուհանդերձ, մեկնել *pat kartak* «ըստ դատական ընթացակարգի»: Սա ցույց է տալիս, որ դատավորի գործունեությունն աստիճանաբար սահմանափակ էր, որովհետև նրա դերը, թեպետ կարևոր, այդուհանդերձ, մնում էր մոգերի իշխանության ենթակայության ներքո (Datistan-ī-denik 1.7): Դատավորի իրավասության մասին տե՛ս M. Macuch. Das sassanidische Rechtsbuch "Matakdan i hazār datastān" (Teil II). Wiesbaden, 1981, S. 14–16; 206 n. S. 65–69. Իրոք որ, IX դ. կրոնական բնագրերն ակնարկում են ստախոս և անարդար դատավորների (*Sāyast nē-šāyast* 10.18) մասին (E. W. W e s t. Նշվ. աշխ. էջ 322), *Denkart* 8.22.8:

կանց համար, որոնք պահվում էին իբրև սլաանդներ՝ ապահովելով համաձայնությունների չեզոքությունը: Հայոց Խոսրով III թագավորի պարագայում խոսքն առնվազը վերաբերում է կալանավորման ձեռնարկությանը, որն Արտաշիրի կողմից դառապարավել է շղթայակապության: Վերջինիս մահից հետո նա ազատվել էր շղթաներից և, այսպիսով, շղթայակապ բանտարկյալի վիճակից փոխադրվել պատանդի կացության<sup>49</sup>: Միևնույն ժամանակներում, 570 թ. շրջանում, ապստամբած կազուսիներն են ձերբակալվել Դարայի բանտարկյալների հետ մեկտեղ: Եթե վերջիններս Թեոփիլակտոսի կողմից դիմում են իբրև ուղղափառներ (ԾΟΡΙΚΤΗΤΟΙ), իրականում, պարսկական տեսանկյունից, քաղաքի գրավումից հետո, նրանք դարձել էին Sahansah-ի հպատակներ:

Բանտարկությունն ամբողջում մեծ մասամբ նախատեսում էր բանտարկյալի շղթայումը<sup>50</sup>: Այս դործելամիջոցի կարևորությունը պարսից առաջնային դատավճիռներում հաստատվում է, օրինակ, *pat band i zēndan Karnamak i Ardasir i Papakan*, 14.3 արտահայտությամբ. սա վերաբերում է Արտաշեսի եղբայրների՝ Արտաշիրի համախոհ դարձած իրենց հարազատ քրոջը Հղած նամակին: Վերջիններս գանգատվում են իրենց դժբախտ կացությունից, որի պատճառ էր դարձել նենգ Սասանյանը իրենց դատապարտելով «պատժի բանտային շղթաներով» (*pat band i zāndān patīfras ā vārēt*)<sup>51</sup>: Ինչպես տեսանք, *band*՝ «շղթա, vinculum» բառից առանձնանում է պարթևերեն *bndyst`n* բառը, որը կարող է վերարտադրվել որպես «բանտ»<sup>52</sup>: Շապուհ I-ի տիրապետության օրոք Մանին իր կյանքի վերջին ամիսն անց է կացրել ծանր շղթաներով պարուրված, որոնք ամրացված են եղել ոչ միայն նրա պարանոցին և եռակի անդամ ոտքերին ու ձեռքերին, այլև միմյանց: Խոշտանդումներից նվազած ծեր մարդարեն մահկանացուն բառացիորեն կնքել է այդ երկաթների ծանրության ներքո<sup>53</sup>: Շղթաների միջոցով պատժամիջոցը հիմնավորապես վկայագրված է նահատակների հին ասորական վարքերում<sup>54</sup>: Շղթաները դարձել են նաև պաշտամունքի

49 Մ ո վ ս է ս Խ ո Ր Ե Ն ա ց Ի, էջ 329:

50 Հռոմեական աշխարհում, բնդհակառակը, արտոնյալ բանտարկյալը շղթաներ չուներ (J.-U. K r a u s e. Նշվ. աշխ., էջ 285):

51 H.S. N y b e r g. Նշվ. աշխ., էջ 43, O. M. Ч у н а к о в. Книга деяний Арташира сына Папакана. М., 1987, с. 77.

52 H.S. N y b e r g. Նշվ. աշխ., տե՛ս M. B o y c e. A World-List of Manichaean Middle Persian and Parthian. Teheran-Liege, 1977, p. 27, 105: Սասանյանների օրոք կալանավորման գործընթացում շղթաների դերի մասին տե՛ս Denkart VIII 21.1-5.

53 Manichaen Homilies. III, p. 48.19-25; IV, p. 96.10-2 Polotsky; Psalmos, ccxxvi, p. 19.6 Allberry. Կոպտերեն այս բնագրերում (Manichaen Homilies. IV, p. 93.32 s.; Psalmos, ccxxvi, p. 19.6; ccxli, 43.26) այն շղթան, որը դրվել է մարդարեի սարանոցին, անվանվում է ΚΟΛ-ΛΑΡΙΟΝ. այս արտահայտությունը հունական լատինաբանություն է, որը հավաստվել է II գ. ի վեր (Papiri della Societa Italiana, 1116.8): Համաձայն Acta Archelai-ի (54.9. p. 93.25)՝ Մանինի շղթաներն ունեին տաղանդի կշիռ:

54 Հաղկերտ I-ի (399-420) հալածանքների ընթացքում վանական Նարսայր, նախքան իր մահապատիժը, մի «նեղ ու դժոխային» մենախցում շղթայակապ, գողերի և մարդասպանների հարևանությամբ, մնացել է ինն ամիս (J. L a b o u r t. Le christianisme dans l'empire perse sous la dynastie sassanide (224-632). Paris, 1904, p. 108; P. D e v o s. Abgar hagiographe perse meconnu (debut du Ve siecle).- ABoll 83, 1965, p. 306): Ազնվազարմ Տատաքը, միևնույն հալածանքի ընթացքում, այնտեղ անց է կացրել չորս ամիս (P. Devos.

առարկա, ինչպես կարելի է այդ մասին ընթերցել «Սուրբ Անաստասի կյանքում և վարքում» (BHG, 84, § 80), նաև «Սուրբ Գուրգուռի վարքում» (էջ 430)<sup>55</sup>:

Գուրգուռի վրացական «Վարքում» (6.5) խոսվում է «կրկնակի շղթայի» և «ծանր երկաթե անուրի» մասին, «որը նրան թույլ չէր տալիս նայել դեպի վեր և տեսնել երկինքը»<sup>56</sup>: Ինչ վերաբերում է Մանիի շղթաներին, ապա դրանց կապիչներ էին ագուցվել այն պահին, երբ դատապարտյալը դրանցով շղթայվել էր: Համանման գործելամիջոցների հանդիպում ենք Գուրգուռի պատմության մեջ, որը համառոտակի շարադրվել է (այգուհանդերձ բազմաթիվ տարբերակներով) Հովհաննես Նիկիոացու (VII դարավերջ) կողմից. սրբի պարանոցի շուրջ կար մի շղթա, որը, «համաձայն ասորիների սովորությունների», պետք է մնար դատապարտյալի վրա նույնիսկ նրա վախճանից հետո, որպեսզի այդ ձևով ցույց տրվեր թագավորին<sup>57</sup>: Մի հրեշտակ նրան ազատել է շղթայից, առանց այն արձակելու, այնպես, որ դրա համար հնարավոր չլինի մեղադրել բանտի վերակացուներին (Հովհաննես Նիկիոացու, 96.2)<sup>58</sup>:

Շղթաներն ամրոցում, ամենայն հավանականությամբ, երկաթից էին և ոչ թե արծաթից ինչպես հաղորդում է Ամիանոսը: Պատմիչը խոսում է արծաթե շղթաների մասին, որոնք օգտագործվել են Արշակի համար, սակայն խոսքն ակնհայտորեն վերաբերում է քամահրական մոտեցման, քանզի պարսկերենում *asemen*՝ «արծաթից» ածականը կարող է դյուրին ձևով շփոթվել *asenen*՝ «երկաթից» ածականի հետ<sup>59</sup>: Հավանական է, որ Ամիանոսի տեղեկությունը պայմանավորված է տեղական վկայությունների ուղղակի կամ անուղղակի թյուր ընկալմամբ<sup>60</sup>: Ըստ Փավստոսի՝ Արշակը պարուրված էր երկաթե շղթաներով, որոնք անշարժացնում էին թագավորի ձեռքերն ու ոտքերը<sup>61</sup>: Բանտարկյալների տեղաշարժերը սահմանափակված էին շղթաների ցանցով: Այսպիսով, երբ ներքինի Դրաստամատն Արշակին այցելելու իրավունք ստացավ, նա նախ և առաջ՝ «արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց և յանրոց պա-

Նշվ. աշխ., էջ 311): Բահրամ V-ի օրոք (420–438) Միհրշապուհը երեք տարի մնացել է երկաթների ծանրության տակ (J. L. a b o u r t. Նշվ. աշխ., էջ 112): Սուրբ Անաստասը հարկադրված է եղել բաժանել իր շղթան մեկ այլ բանտարկյալի հետ, մի բան, որն աղոթքի ժամանակ նրան խանգարում էր (B. F l u s i n. Նշվ. աշխ. հ. I, էջ 234, հ. II, էջ 238):

55 B. F l u s i n. Նշվ. աշխ., էջ 80 և 137 ծան.:

56 G. G a r i t t e. Նշվ. աշխ., էջ 430:

57 Շղթան կնքված էր նաև բուլլայով, նույնիսկ անուրով, որը կարելի էր արձակել միայն բանտարկյալին գլխատելու միջոցով (B. F l u s i n. Նշվ. աշխ., հ. I, էջ 70, ծան. 104, էջ 84, ծան. 149, հ. II, էջ 257-259):

58 P. P e e t e r s. Նշվ. աշխ., էջ 100-102:

59 Այս արտահայտությունների մասին տե՛ս H. S. N y b e r g. Նշվ. աշխ., էջ 31:

60 Ամիանոսի պատմումը Հայաստանի գործերի մասին Վալենտի օրոք «տեղեկատվության հարստության և կարևորության առումով մեծարժեք է և, անտարակույս, համեմատելի այն տեղեկությունների հետ, որոնք կարելի է գտնել լավագույն հայ պատմիչների մոտ (G. S a b b a h. La methode d'Ammien Marcellin. Recherches sur la construction du discours historique dans les Res Gestae. Paris, 1978, p. 235. Վերջինս եվթյուրոսի համարում է Ամիանոսի գլխավոր իրազեկիչն այս հարցում): A g a b a n a տեղանունը, իրոք որ, հիշեցնում է Հայ[երեն] «կապան» բառը»:

61 Փ ա վ ս տ ո ս Ի ու զ ա ն ֆ, էջ 260:

բանոցէն շղթայիցն սարեացն»<sup>62</sup>: Միևնույն եղանակով սուրբ Գրիգորըն է պարուրվել երկաթներով (σεσιδηρωμένη καθ' ὅλου τοῦ σώματος, § 9):

Որոշակի պահից սկսած՝ շշուկ է տարածվում բերդից փախուստի դիմելու հնարավորութեան մասին: Իացի Դարայի բանտարկյալներից, «Սուրբ Հովհաննես Ողորմածի վարքում» ես հիշատակվում եմ կիպրոսցի բանտարկյալներ, որոնց հաջողվել է փախչել և վերստին առաջ հայրենիք<sup>63</sup>: Այդուհանգերձ, այս բոլոր երգիծական պատումներն արտացոլում են թե՛ Արևելքում, թե՛ Արևմուտքում բազմաթիվ անձանց բանտարկութեան հետ կասկած սարսափը, որին մենք վերստին առնչվում ենք սուրբ ազատարարի վարքագրութեան մեջ, ինչպիսին է սուրբ Սարգիսը, որի սուրբ Գևորգի, էլիա և Հիզրի իսլամական ավանդույթներին զուգահեռ ավանդույթը հավաստում է. «Ճերմակաղբեստ և արևի նման փայլաակող մի էակ», որը ժամանակավորապես ազատ էր արձակում կիպրոսցի բանտարկյալին<sup>64</sup>:

Անհուշ բերդի մասին վերհիշելու արգելքը վերադրվել է հնագույն մի օրենքի (νόμον οὐτῶα δὴ παλαιόν, Պրոկոպիոս, Պատերազմների մասին, 1.5.33.), որն արտացոլվել է Դրաստամատի հետ ունեցած Շասուհի զրույցում և շարադրվել Փալատոսի կողմից (5.7): «Խիստ եմ խնդրուածքդ, գոր խնդրեցերդ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիւնս Պարսից կանկնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ՚ի մարդկանէ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց գոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ որ յայնմ բերդի չոք եղեալ է. թող թէ զնա զայր թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն. քան մինչ աշխատ արարեր զմեզ, և զու աւտդիկ զանձն ՚ի մահ եղիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Արեաց ՚ի սկզբանէ: Բայց զի վասն՝ քո մեծ վաստակք եմ առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ դաւառս կամ դանձս: Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Արեաց թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինչնս խնդրեցեր փոխանակաց քոց»<sup>65</sup>:

Սովորույթի ենթագրվող հնամենիութեանը կարող է հավանաբար վերաբերվել Սասանյանների կողմից աքեմենյան թագավորութեանը վերադրվող դադափարախոսութեանը վերստին կյանքի կոչելու հակումին, որի առթիվ Գ. Գնյուլին իրավամբ հղում է ժամանակակից պատմագրութեան

62 Նույն տեղում, էջ 318: Փալատոսի բնագրի ընդհանուր հենքի մասին տե՛ս Գարսոյանի ծանոթագրութեանը (N. G. G a r s o i a n. The Epic Histories..., p. 301, 313):

63 Տե՛ս P. P e e t e r s. Նշվ. աշխ.:

64 Ընդհանուր առմամբ տե՛ս G. S c a r c i a. Epifani Baba.– Asik-Kerib (Eurasistica 28). Venezia, 1991; նույնի Cosroe secondo, San Sergio e il Sade.– Studi sull' Oriente cristiano 4.2: Համանման դիպվածի մասին տե՛ս B. F l u s i n. Նշվ. աշխ. հ. 1, էջ 68: Խոսքը վերաբերում է ճերմակաղբեստ բազմաթիվ մարդկային էակների, ի դեմս որոնց Անաստասը ճանաչել է սրբերի:

65 Փ ա վ ո ս ո ս Բ ու զ ա ն դ, էջ 316:

մշակած «ավանդույթի հայտնադործման» կատեգորիան<sup>66</sup>: *Νόμος* բառը պատմադիտական հենքերում չունի տեխնիկական նշանակություն: Ադաթիասի կողմից (2.24.5) վկայակոչված ղորաստրյան չափանիշների առթիվ, ինչպես նկատել է Մայքլ Ուիթբի, այնպիսի արտահայտությունների ասարբերակումը, ինչպիսիք են *ἔθνη*, *νόμιμα* օ *νόμοι*, պայմանավորված է ուճի պահանջներով: Պրոկոպիոսի մասնավոր պարագայում, ամբողջի մասին հիշատակելու արդեւքը որպես *νόμος* բնորոշելը, կարող է պարզապես արտացոլել բյուզանդական առաջին սլատմաբանների տրամադրվածությունը, որոնք Սասանյաններին էին վերագրում օրենքների այնպիսի դասակարգում, որը համանման էր իրենց օրենքների դասակարգմանը<sup>67</sup>: Այն դեպքում, երբ պարսից ավանդույթի մեջ չկա իրավունքի դասակարգում և «Մատյան ի հազար դատաստանն» իրենից ներկայացնում է դիտավորապես օրինակելի դատավճիռների ժողովածու, որը, չունենալով չափանիշներ սահմանողի արժեք, համեմատելի է *Denkart*-ի ութերորդ գրքում հաշվառված *Nask*-երի ժողովածուի հետ<sup>68</sup>:

Ուիթբիի եզրակացությունը, այդուհանդերձ, խոցելի տեղ ունի: Հիրավի, այն ավանդույթը, որն ընդհանուր է Պրոկոպիոսի և Փավստոսի համար, բխում էր հայկական սկզբնաղբյուրներից: Պրոկոպիոսն ավելի շուտ ընդհանուր և անորոշ արտահայտություններով է հենվում «հայերի մասին գրված հաշվետվությունների» վրա (ή τῶν Ἀρμενίων ἱστορία. Պատերազմների մասին, 1.5.9; Procopius, De Aedisais, 3.1.6; Հմմտ. նաև η τῶν Ἀρμενίων συγγραφή Պատերազմների մասին 1.5.40)<sup>69</sup>: Անհուշ բերդին վերաբերող *νόμος*-ը, որը մեկնաբանվում է իբրև իրավաբանական չափանիշ, կարող է արդարացվել ինքնակալի *x'arenah*-ի կողմից երաշխավորված գերագույն օրենսդրի դերն իրեն վստահվող սովորույթով, ինչպես ցույց է տալիս, օրինակ, *sahan sâh Eran u Anērân*-ի կամայական բունակալություն վրա հիմնված համակարգը մերկացնող «Թանսարի նամակի» նշանավոր հատվածը<sup>70</sup>:

Այդուհանդերձ, ըստ այն ավանդույթի, որին տուրք են տվել թե՛ Պրոկոպիոսը, թե՛ Փավստոսը՝ Շապուհը (Պրոկոպիոսի մոտ՝ Πακούριος), որը որոշակիորեն զգում էր սովորույթը հարգելու սլարտավորությունը, այդուհանդերձ, ի վիճակի է եղել քուշանների դեմ պատերազմի ընթացքում իրեն փրկած հայ ներքինի Դրաստամատի համար ոտնահարելու օրենքը: Դա բացահայտվում է Փավստոսի կողմից, այն դեպքում, երբ Պրոկոպիոսը թեմայից շեղվում է, որսվողի ցույց տա, թե նվազագույնը մեկ անգամ պարսից *νόμος*-ի օրինականությունը զանց է առնվել և որ դրա խախտումը մեծ զանցանք էր (Պրոկոպիոս, Պատերազմների մասին, 1.5.9.

66 Հմմտ. G. G n o l i. L'Iran tardoantico e la regalità sasanide.– Mediterraneo Antico 1, 1998, p. 119. տե՛ս նաև նույնի The Idea of Iran. An Essay on its Origin. Roma, 1989.

67 M. W h i t b y. The Persian King at War // E. Dabrowa (ed.). The Roman and Byzantine Army in the East. Kraków, 1994, p. 229.

68 A. P e r i k h a n i a n. նշվ. աշխ., էջ 12:

69 Հմմտ. Ջ. Տրաիս. նշվ. աշխ. և վերը նշված թիվ 5 ծան.:

70 M. B o y c e. The Letter of Tansar. Rome, 1968, p. 42. Հարցի մասին տե՛ս G. G n o l i. L'Iran tardoantico e la regalità sasanide.

ἄπαξ... παραλέλυσθαι; 1.5.40. τὸν νόμον... λέλυσθαι)<sup>71</sup>: Երբ բարձրաստիճան անձինք Կավադին բանտարկում են բերդում, Տաբարին այն բնորոշում է իբրև «մի վայր, որտեղ մուտք գործելու իրավունք միայն իրենք ունենին»<sup>72</sup>:

Մյուս կողմից՝ բացառությամբ անցումային իրավիճակների, ինչպես այս վերջինը, երբ թագավորական x'arena-ը վերանում էր, Անհուշ ՆՈՄՈՏ-ը կապված էր գլխավորապես Սասանյան թագավորության հետ: Թեոփիլակտոսը մատնանշում է. «Վայրը նախատեսված էր թագավորական զայրույթին արժանացած անձանց համար, այնպես, ինչպես լավ աիրույթն է ընծայվում Աստծուն: Նշանակահարմար կլինի այն բնորոշել իբրև ատելության ուխտատեղի (ΤΕΜΕΝΟΣ ΔΥΣΜΕΝΕΙΑΣ) (3.5.3)»: Փաստորեն, վայրն ընդունում էր թագավորական կամ ազնվականական ծագում ունեցող անձանց, ինչպես յուրօրինակ Բաստիլ<sup>73</sup>: Դարայի բանտարկյալներին վերաբերող՝ Թեոփիլակտոսի պատումը տեղիք է տվել խորհելու զինվորներին ևս կայանավորելու մասին. «Այստեղ փակի տակ են պահվում բոլոր նրանք, ովքեր չհաճոյանալով թագավորին, ընկել են ծուղակի մեջ. խոսքը կարող է վերաբերել հպատակներին, ինչպես նաև պարտված ռազմիկներին» (նույն տեղում): Ընդհանուր հենքն այնուամենայնիվ հուշում է, որ բացի հայ կամ պարսիկ «երկաթե ղեմակներից» բանտը «հյուրընկալում» էր նաև ապստամբած կամ ոչ հեռավոր անցյալում հպատակեցված համայնքների անվանի մարդկանց խմբերի: Ըստ Փավստոսի հաղորդած՝ Դրաստամատին վերաբերող զրույցների, Շապուհն ասել է, թե Արշակը կայանավորվել էր, քանզի իր հակառակորդն էր: Ինչ վերաբերում է Պրոկոպիոսին, ապա նա ենթադրում է, որ Արշակը կարող էր բանտարկվել, որովհետև արքայից արքան «երբեք չէր կարող սպանել թագավորական արյուն ունեցող մարդու» (Պատերազմների մասին, 1.5.29.): Ամեն դեպքում, միայն թագավորի որոշումն էր, եթե ոչ հենց նրա մահը (ինչպես արդեն հիշատակված Խոսրոսը III-ի պարագայում), ի զորու հետաձգել կամ անվավեր համարել դատավճիռը վերացնելով շղթաների կնիքները:

Եթե, ինչպես տեսնում ենք, ՆՈՄՈՏ-ի հնամենիությունը չի նախորդում սասանյան տիրապետությանը, նրա ակունքներն, այդուհանդերձ, կարելի է որոնել աքեմենյան դարաշրջանին բնորոշ որոշ հայտանիշներում, որոնք հիմք են տալիս խորհելու ինքնակալի կողմից իրականացվող վերահսկողության և մոռացության դատապարտվածի միջև գոյություն ունեցող յուրօրինակ հաղորդակցության մասին: Մի պահ կանդ առնենք ἄνασπαστοί արտահայտության վրա, որը Հերոդոտոսից ի վեր օգտագործվել է արքայից արքայի կողմից տեղահանված որոշ ժողովուրդների բնորոշելու համար: Ակզբնաղբյուրները մատնանշում են ἄνασπαστοῦς ποιέειν տեխնիկական արտահայտությունը, որը Հերոդոտոսի մեկնաբանությունն ա-

71 M. W h i t b y. The Persian King at War, p. 231.

72 Th. N o l d e k e. Նշվ. աշխ., էջ 142, 144; C.E. B o s w o r t h. Նշվ. աշխ., էջ 133:

73 A.J. F e s t u g i è r e, L. R y d é n. Նշվ. աշխ., էջ 588; «անունը հատկանշական է (հմմտ. Հիտլերի "Nacht und Nebel" ճամբարների հետ)»: Քրիստենսենը զուգահեռ է անցկացրել Բաստիլի հետ (A. C h r i s t è n s e n. Նշվ. աշխ., էջ 308):

վանդաբար լուսաբանում է իբրև «տեղահանել»<sup>41</sup>: Հիրավի, լեմմայի հունարեն ձևն անկասկած պայմանավորված է հունարեն ἀνασπασ-ի («ետ վերցնել», «վերցնել») հետ համահունչությամբ: Այգուհանդերձ, արտահայտության ետևում թաքնված է պարսկերեն մի բառ, որը կարելի է վերափոխել Ավեստայում նշված anaspasta՝ «անտեսանելի», «հնարավոր չի տեսնել»<sup>42</sup> բառով:

Մի հին ծանոթագրության մեջ, որը վրիպել է հունաբանների ուշադրությանը, Պոլ դը Լաֆարդն իրավամբ նկատել է, որ բառի նախնական լեմմաստը նշանակում է ավելի շուտ «վտարված», քան «տեղահանված»<sup>43</sup> և իբրև դրա ապացույց հստակորեն մատնանշել է Λήθης φρούριον-ի օրինակը: Իրեն բնորոշ սեղմ ռոնով՝ Լաֆարդը սահմանավակվում էր մատնանշելով Բերդին վերաբերող բյուզանդական սկզբնաղբյուրները՝ առանց հավաստի բացատրություն տալու ստուգաբանությանը, որը նա ճշգրտել էր: Սակայն ակնհայտ է, որ սահմանամերձ ժողովուրդների կամ բանտարկյալների աննկատ մնալու հանգամանքը կախված է այն շարժառիթից, որն ազդում է թագավորի վրա<sup>44</sup>: Մյուս կողմից եթե հույն հեղինակները, որոնք ընդունել են այս պրոչմը, հավատ չեն ընծայում կոնկրետ նյութերի մանրամասնեթին, փոխարենը նրանց զգացողությունն աքեմենյան իշխանության խորհրդանշական համակարգի հանդեպ չի կարող դիտվել իբրև այն դրական «հայելու» սլարդունակ արտացոլում, որն իբրև գաղափարա-

74 *Sb's*, օրինակ, Hdt, 3.93.2՝ Աստերիի ծանոթագրությունների հետ մեկտեղ՝ D. A s h e r i. Commento // Erodoto. Le Storie. Vol. III. Libro III. La Persia. Milano, 1990, p. 317. Ընդհանուր առմամբ *տե'ս P. B r i a n t. Histoire de L'Empire perse. De Cyrus a Alexandre. Paris, 1996, p. 523, 779.*

75 *Սոսքը վերաբերում է հնգվորդական ձևից դառնող (s)pas- լայական արմատի ածական դերբային, որը կարելի է վերակազմել ինչպես \* spek- (հմտ. լաա[խներեն]՝ specio, հուն[արեն]՝ σκεπτομαι):*

76 P. de L a g a r d e. Նշվ. աշխ., էջ 195. Լիդել-Սքոթ-Ջոնսի բառարանը (A Greek-English Dictionary) Հերոդոտոսի արտահայտությունը թարգմանում է «երկրով մեկ քարչ գալ» ձևով, որը զուգահեռ է ἀνασπαστος «կանց առնել» սկզբնական իմաստին և համապատասխանում է այս լեմմայի ավելի տարածված գործածությանը: Պոկորնին (J. P o - k o r n y. Indogermanisches etymologisches Wörterbuch I. Berne, 1951-9, S. 659) չի բացառում փոխառությունը պարսկերենից: Իր Լաֆարդը գիտում է իբրև "erst späte sophisten kennen ἀνασπασտον für verjagen und haben diesen gebrauch erst aus dem falsch erkärten ἀνασπαστος [sic] abstrahiert":

77 Բսենոփոնի նշանավոր հատվածը որոշ պաշտոնյաների գործունեությունը ներկայացնում է ինչպես «արքայի ականջներ» և «արքայի աչքեր» (*Ք ս ե ն ո փ ո ն*. Կյուրոպեգիա. Երևան, 2000, էջ 320). *տե'ս S.W. H i r s c h. The Friendship of the Barbarians. Xenophon and the Persian Empire. Hannover-London, 1985, p. 101-134; E. K h u r s h u d i a n. Նշվ. աշխ., էջ 136: Այգուհանդերձ, Բրիանը (P. B r i a n t. Նշվ. աշխ., էջ 356) հիշատակում է. «Ջնայած իրանագետների՝ սլարսկական ծագում ունեցող տերմինաբանությունը վերագտնելու ուղղությամբ գործադրած ջանքերին, աքեմենյան corpus-ի որևէ փաստաթուղթ չի վավերացնում նման հաստատության գոյությունը: Հաճախ եփիպտոսի արամեական փաստաթղթերի մի արտահայտության՝ «gaušaka»-ի և հունական արտահայտությունների միջև զուգահեռներ են անցկացվել, սակայն համադրումը վերջնական չի թվում»: Իրականում, այգուհետե ցույց է տրվել, որ մ[իջին] պ[արսկերենի] "bidaxs" (տե'ս Հայ[երեն]՝ «բդեխս») բառն ունի «երկրորդ թագավորի» սկզբնական իմաստ և որ տիտղոսը ճշգրտորեն ընկալվել է բազում հույն ու լատինական հեղինակների կողմից. տե'ս Աղեմբրենիի մոտ գեանդված փաստաթղթերը. O. S z e i n e r e n y. Iranica V.– Monumentum H. S. Nyberg II. Teheran-Liege. 1975:*



կան սարատեգիա ստեղծվել է հույների կողմից՝ ուրիշին բնութագրելու համար: Այս սլարադաշյում նմանապես հայկական սկզբնաղբյուրները թույլատրում են անել այլ ճշգրտումներ. եթե Մ[ովսես] Խ[որենացու] «յԱնյիչելի» տարբերակն<sup>78</sup> իմաստարանորեն ավելի է մոտ հունարենի ֆրոսիսն Աիթիս-ին, ապա շատ ավելի տարածված «Անհուլը» լավագույնս հենվում է իրանական իմաստաբանական կանոնների ժողովածուի վրա<sup>79</sup>:

Ֆրանսերենից թարգմանեց  
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

<sup>78</sup> Մ ո վ ս է ս Խ ո ռ ե ն ա յ ի, էջ 330:

<sup>79</sup> Գոլինդուշի վրացական «Վարքը» ներկայացնում է երկու աարբերակները (6.5 և 7.2). տե՛ս G. G a r i t t e. Նշվ. աշխ., էջ 430: